ԱԿԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Հուշեր սովորաբար գրվում են գրականության եւ արվեստի նշանավոր գործիչների մասին: Իսկ ինչ վերաբերում է գիտնականներին, ապա նրանք հազվադեպ են դառնում հուշագրության «հերոսներ»: Դրա համար էլ մենք այսօր մեր հռչակավոր գիտնականների մասին քիչ հուշագրություններ ունենք ու եղածներն էլ հիմնականում ցրված են ժամանակի պարբերական մամուլի էջերում, տարբեր հեղինակների երկերում եւ այլուր: Դրանք ժողովելը եւ առանձին հատորներով հրատարակելը դժվարին աշխատանք է: Այդ իսկ պատճառով նման ժողովածուներ մեզանում գրեթե չեն ստեղծվել, որոնք նվիրված լինեին գիտության այս կամ այն երախտավորի կյանքին ու գործունեությանը:

Հայ իրականության մեջ նման վերաբերմունքի թերեւս առաջինն արժանանում է ականավոր պատմաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Համազասպի Մանանդյանը, որին նվիրված հուշեր արժեքավոր ժողովածուն[1] լույս է ընծայվել վերջերս: Այն կազմել ու տպագրության է պատրաստել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու Պետրոս Հովհաննիսյանը:

Հ. Մանանդյանը մեր նորագույն շրջանի պատմագրության ու բանասիրության երախտավորներից մեկն է: Նա, գիտական ասպարեզ իջնելով անցյալ դարի սկզբներին, խոշորագույն հայագետներ Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միաբան), Մանուկ Աբեղյանի, Գարեգին Հովսեփյանի, Նիկողայոս Ադոնցի, Հրաչյա Աճառյանի եւ այլ կարկառուն դեմքերի հետ մեկտեղ կարողացել է հայագիտությունը բարձրացնել մի նոր մակարդակի եւ դրանով իսկ իր մնայուն ու պատվավոր տեղն գրաղեցնել նրանց շարքում: Նրա թողած գիտական հարուստ ժառանգությամբ կրթվել ու դաստիարակվել են հազարավոր երիտասարդ պատմաբաններ ու բանասերներ ոչ միայն մայր հայրենիքում, այլեւ արտերկրում: Նրա փաստալից դասախոսությունները համակ ուշադրությամբ են լսել Երեւանի պետական համալսարանի ուսանողության առաջին սերունդները, որոնցից շատերը հետագայում դարձել են մեծանուն գիտնականներ, պետական ու մշակութային նշանավոր գործիչներ:

Հ. Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին Ախալցխայում, ուր Կարապետյան վարժարանում ստացել է նախնական կրթություն, ապա 1883-1893 թթ. ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսի առաջին գիմնազիայում, այնուհետեւ բարձրագույն կրթություն է ստացել Գերմանիայում՝ ուսանելով Ենայի, Լայպցիգի եւ Ստրասբուրգի համալսարաններում, իսկ 1898 թ. էքստեռն կարգով ավարտել է նաեւ Սանկտ Պետերբուրգի համալսարանի արեւելյան լեզուների ֆակուլտետը: Հարուստ գիտելիքներով վերադառնալով հայրենիք՝ շուրջ հինգ տարի (1900-1905 թթ.) աշխատել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում՝ ծավալելով գիտամանկավարժական բեղուն գործունեություն, ապա 1906-1907 թթ. պաշտոնավարել է Թիֆլիսի առաջին եւ երկրորդ գիմնազիաներում ու Ներսիսյան դպրոցում, որից

1 «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին», հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 254:

հետո կրկին էքստեռն կարգով հանձնելով քննություններ՝ 1909 թ. ավարտել է Դորպատի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը եւ աշխատանքի մեկնել Բաքու, ուր շուրջ մեկ տասնամյակ զբաղվել է փաստաբանությամբ եւ եղել երդվյալ հավատարմատար: Այդ ընթացքում նա դասախոսել է նաեւ ժողովրդական համալսարանում (1911-1913 թթ.), այնուհետեւ՝ 1915-1919 թթ., առեւտրական դպրոցում:

Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության կողմից 1919 թ. դեկտեմբերին Հ. Մանանդյանը հրավիրվել է Երեւանի նորաստեղծ համալսարան եւ նշանակվել դասախոս, ապա պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո ընտրվել է ռեկտոր[2]: Նա իր ռեկտորության կարճատեւ շրջանում ամեն ինչ արել է համալսարանում նոր ֆակուլտետներ բանալու եւ բարձրագույն կրթության հիմքերն ամրապնդելու ուղղությամբ: Այդ օրերին գրած իր նամակներից մեկում նա հետեւյալն է ասում. «...Ես ապրում եմ միայն համալսարանի ստեղծագործական գաղափարով, որ համարում եմ այս երկրի համար ամենակարեւոր գործը եւ՛ վերաշինության, եւ՛ վերածնության միակ ուղիղ ճանապարհը: Իմ ամբողջ կյանքը միմիայն կապված է համալսարանի հետ. ուրիշ այլ բովանդակություն ու ընթացք մեր կյանքը չէ ունեցել»[3]:

Ռեկտորությունից հետո եւս Հ. Մանանդյանը աշխատել է համալսարանում, եղել արեւելագիտության եւ պատմագրական ֆակուլտետների դեկան՝ միաժամանակ հիմնադրելով ու վարելով հայ ժողովրդի պատմության ամբիոնը: Նա համալսարանում վարչական ու գիտամանկավարժական աշխատանք է կատարել մինչեւ 1931 թ., որից հետո անցել է զուտ գիտական գործունեության:

Հ. Մանանդյանի կենսագրական այս տեղեկությունները մենք քաղում ենք նրա հուշերի ներկա ժողովածուն բացող «Հայագիտության երախտավորը» վերտառության առաջաբանից, որի հեղինակն է գիրքը կազմող եւ հրատարակության պատրաստող Պ. Հովհաննիսյանը: Ճանաչված պատմաբանն իր այդ ներածականում հակիրճ կերպով ներկայացնում է նաեւ Հ. Մանանդյանի հետագա գործունեությունը ՀԽՍՀ ԳԱ համակարգում, անդրադառնում է նրա թողած գիտական հարուստ ժառանգության կարեւորությանը հին եւ միջնադարյան Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար, փորձում վերհանել նրա ավանդը հայ պատմագրության զարգացման գործում:

Հ. Մանդյանն ապրել ու ստեղծագործել է հասարակական-քաղաքական կյանքի չա-

2 Մինչեւ 1989 թ. մայիսի 15-ը խորհրդային իրականության մեջ այն տեսակետն էր արմատավորված, որ ԵՊՀ առաջին ռեկտորը եղել է Հ. Մանանդյանը: Սակայն, նշված օրը տեղի ունեցած գիտաժողովում, որը նվիրված էր Մայր կրթօջախի հիմնադրման տարեթվի ճշգրտմանը, վերջնականապես վերականգնվել է այն իրողությունը, որ Երեւանի համալսարանը ստեղծվել է 1919 թ. մայիսի 16-ին, եւ նրա առաջին ռեկտորը եղել է նշանավոր իրավաբան, պրոֆեսոր Յուրի Ղամբարյանը (1850-1926): Իսկ Հ. Մանանդյանը եղել է Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո այդ համալսարանի հիմքի վրա 1920 թ. դեկտեմբերի 17-ին վերակառուցված Երեւանի ժողովրդական համալսարանի առաջին ռեկտորը, որ ընտրվել է 1921 թ. հունվարի 2-ին նորակազմ խորհրդի անդրանիկ նիստում փակ (գաղտնի) քվեարկությամբ, եւ այդ պաշտոնը վարել է մինչեւ նույն տարվա հոկտեմբեր ամիսը: Ի դեպ, ԵՊՀ ռեկտորներից միայն Հ. Մանանդյանն է, որ ըստ կանոնադրության այդ պաշտոնն զբաղեցրել է ընտրությամբ: Հետագայում, մինչեւ անցյալ դարի վերջերը, ռեկտորները նշանակվել են ՀԽՍՀ բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության պետական կոմիտեի, ապա այդ կոմիտեն միանիստությամբ փոխարինվելուց հետո՝ վերջինիս կողմից:

3 Տե՛ս «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին», էջ 3 (այսուհետեւ սույն գրքի էջերը կնշվեն շարադրանքի մեջ՝ փակագծերում):

փազանց բարդ ու ալեկոծություններով լի մի ժամանակաշրջանում, երբ տեղի են ունեցել Առաջին աշխարհամարտն ու Հայոց մեծ Եղեռնը, ապա դրանց հաջորդել են մի շարք խոշոր հեղաբեկումներ, որոնց ականատեսն ու վկան է եղել նա, հետագայում՝ նաեւ մասնակիցը իր ժողովրդի կյանքում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների, որոնցից մեկն էլ Երեւանի պետական համալսարանի հիմնադրումն էր, որի մեջ անուրանալի է նրա ավանդը: Թե՛ համալսարանում աշխատելու տարիներին եւ թե՛ դրանից հետո, ընդհուպ մինչեւ իր մահը (1952 թ. փետրվարի 4-ը), Հ. Մանանդյանը ծավալել է գիտահետազոտական բեղուն գործունեություն եւ ունեցել է լայն շրջապատ, նաեւ՝ աշխատանքային անվանի գործընկերներ, հանդիպել է երեւելի գիտնականների ու արվեստագետների հետ, շրջապատված է եղել ուսանողներով ու երիտասարդ հետազոտողներով, որոնցից ոմանք հետագայում գրել են իրենց հուշերն ու տպավորությունները այդ ժրաջան գիտնականի ու անզուգական ուսուցչի, առաքինի մարդու, մեծ անհատականության մասին: Դրանց մի զգալի մասը ժամանակին տպագրվել է մամուլում թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում, իսկ մի քանիսն էլ մնացել են անտիպ:

Ներկայացվող ժողովածուում ամփոփված են հրապարակի վրա եղած ու արխիվներում պահպանվող այդ հուշագրությունները, որոնք թվով 18-ն են, իսկ հեղինակները՝ 16-ը: Նրանցից մեկը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու Արսեն Մանանդյանը, որ պատմաբանի կրտսեր եղբայրն էր, գրքում ունի երեք նյութ, որոնցից միայն մեկը կարելի է հուշ համարել, որ նա գրել է իր եղբոր մահվան հինգերորդ տարելիցի կապակցությամբ, իսկ մյուս երկուսը վերաբերում են գիտնականի բնավորության բնորոշ գծերի վերհանմանն ու աշխատությունների բնութագրմանը:

Մյուս հուշագրողները տարբեր մասնագիտությունների տեր, հասարակական-քաղաքական ու կուսակցական տարբեր հայացքներ ունեցող անձիք են, որոնցից են, օրինակ՝ հոչակավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, խոշոր պատմաբաններ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Բորիս Գրեկովը, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, պատմաբան ու հնագետ Մորուս Հասրաթյանը, գիտությունների թեկնածու Վազգեն Ոսկանյանը, ՀՅԴ կուսակցության երեւելի գործիչներ Սիմոն Վրացյանն ու Ռուբեն Դարբինյանը, եկեղեցական-հասարակական գործիչ Արսեն ավագ քահանա Սիմոնյանը, պրոֆեսորներ՝ լեզվաբան Հովսեփ Կուսիկյանը, թատերագետ-արվեստաբան Գառնիկ Ստեփանյանը, գրականագետ Հովհաննես Ղանալանյանը, սփյուռքահայ ճանաչված մտավորականներ Գառնիկ Գյուզալյանն ու Աշոտ Արծրունին, մանկավարժ Հակոբ Մխիթարյանը: Նշված հեղինակներից շատերը Հ. Մանանդյանին ճանաչել են մոտիկից, ոմանք եղել են նրա հայրենակիցները, աշխատել են նրա հետ, ունեցել են սերտ հարաբերություններ եւ կամ եղել են նրա սաները Երեւանի համալսարանում ու այլ կրթօջախներում, լսել են նրա դասախոսությունները ու դրանց տպավորությունների տակ գրել իրենց սրտառուչ հուշերը:

Հատկապես ջերմ ու անմիջական են Հ. Աճառյանի հուշերը, որոնք վերաբերում են Հ. Մանանդյանի հետ միասին Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում աշխատելու տարիներին, երբ նրանք համատեղ ուժերով հրատարակության են պատրաստել «Հայոց նոր վկաները» արժեքավոր ժողովածուն, որն ընդգրկում է Էջմիածնի մատենադարանում պահվող 1155-

1843 թթ. ձեռագրերի հայկական վկայաբանական գրականության քննահամեմատական բնագրերը՝ ընդարձակ տեղեկություններով ու անհրաժեշտ ծանոթագրություններով, ինչպես նաեւ հատուկ անունների ու օտար բառերի բացատրական ցուցակներ ու ցանկեր: Հ. Աճառյանի վկայությամբ Մանանդյանն Էջմիածնում մանկավարժական գործունեությանը զուգընթաց ժրաջանորեն զբաղվել է ձեռագրերի ուսումնասիրությամբ, ծրագրել է մի մենագրություն գրել հայ մշակույթի մասին: Նա այդ տարիներին եղել է նաեւ «Արարատ» հանդեսի խմբագրի տեղակալ ու ծավալել է խմբագրական-հրատարակչական լայն գործունեություն, կապեր հաստատել հայագիտական այլ պարբերականների խմբագրությունների հետ, աշխատակցել նրանց:

Ժողովածուում ընդգրկված նյութերի մի զգալի մասը ժանրային առումով հուշեր չեն, այլ գնահատականի խոսքեր են, ականավոր հայագետի գործունեությունն ու գիտական վաստակը վերհանող ու արժեւորող հոդվածներ, որոնք գրվել են տարբեր առիթներով, հատկապես գիտնականի ծննդյան ու մահվան տարելիցների ու հոբելյանների կապակցությամբ: Իսկ բուն հուշերը մեծ թիվ չեն կազմում եւ հիմնականում վերաբերում են Հ. Մանանդյանի կյանքի ու գործունեության ուշ շրջանին: Իսկ նրա կյանքի վաղ տարիների մասին հուշեր գրեթե չկան, եղածներն էլ փոքրիկ ծվեններ են, որ տեղ են գտել իր եղբոր գրած նյութերում:

Ինչեւէ. ներկա ժողովածուն բավական լայն պատկերացում է տալիս Հ. Մանանդյանի մասին: Բոլոր հուշագիրները նրան բնութագրում են որպես պարթեւահասակ ու վայելուչ արտաքինով եւ վերին աստիճանի կիրթ ու լայն մտահորիզոն ունեցող, հարուստ գիտելիքներով օժտված անհատականություն, որը կյանքում ու կենցաղում եղել է չափազանց պարզ ու հասարակ, ազնիվ ու շիտակ, միշտ զուսպ ու լուրջ, իր էությամբ բարի ու համեստ, սակայն նաեւ խստաբարո ու պահանջկոտ: Նա եղել է վերին աստիճանի ճշտապահ ու պարտաճանաչ, աշխատասեր ու բարեխիղճ, արդարամիտ ու արդարադատ: Նրա շարժուձեւի ու գործելակերպի մեջ երբեք ցուցամոլություն չի նկատվել: Նա եղել է նաեւ բարձր կուլտուրայի տեր անզուգական դասախոս, որն իր սաներին հարուստ գիտելիքներ տալուց զատ, նրանց հոգիներում սերմանել է խոր հայրենասիրություն: Այդ է վկայում նրա համալսարանական սաներից մեկը՝ Ա. Արծրունին, որ գրում է. «Իր ուսանողներուն համար Մանանդյանը պատմաբանե եւ դասախոսե ավելի, կերկայանար որպես գաղափարի առաքյալ մը: Ան գաղափարախոսն էր ջերմ հայրենասիրության եւ Հայաստանի անկախության: Այդ գաղափարները վրանցաց չէր քարոզեր, սակայն կհասկցներ ու զգալ կուտար ամեն անգամ, երբ իր դասախոսած նյութը կհարկադրեր զինքը «փոքրիկ շեղում մը կատարելու»... Բայց օր մըն ալ Հ. Մանանդյան ներկայացավ ուսանողներուն իր բարոյական ողջ բարձրությամբ եւ գաղափարական վսեմ խոյանքով» (էջ 59): Հեղինակն այնուհետեւ վերհիշում է Հ. Մանանդյանի՝ իրենց կուրսում դրանից երեսուն տարի առաջ՝ 1922 թ. մայիսի վերջերին կարդացած դասախոսությունը, որն ականավոր գիտնականն ավարտել է հետեւյալ խոսքերով. «Դուք տեսաք, - ըսավ ան, այս անգամ շեշտակի նայելով մեր ուսանողներուն, - որ հայ ժողովուրդն իր պատմության ամբողջ ընթացքին միշտ էլ պայքարել ու վերականգնել է իր երկրի անկախությունը: Եւ ես համոզված եմ, որ այս անգամ էլ նա կթոթափի օտար լուծը ու կվերստանա մեր հայրենիքի անկախությունը...: Մագնիսացած ուսանողությունը պահ մը քար լռություն պահեց ու ապա որոտընդոստ ծափահարությամբ ողջունեց իր սիրած պրոֆեսորին վերջին խոսքերը» (էջ 62):

Հ. Մանանդյանի կյանքից առնված նման բնութագրական եւ ուսանելի դրվագներ շատ կան սույն գրքում, որոնց կարելի է ծանոթանալ հուշերն ընթերցելով: Ի դեպ հուշերում հիշատակվում են նաեւ այլ երեւելի դեմքեր ու նրանց հետ կապված դեպքեր, որոնք կարող են պիտանի լինել նրանց կենսագրություններն ամբողջացնելու համար: Անհրաժեշտ է նշել նաեւ, որ ժողովածուում զգալի թիվ են կազմում պատմաբանի գիտական ժառանգությանը նվիրված նյութերը, որոնք գրքում ներկայացված են ժամանակագրական կարգով: Դրանցից հատկապես աչքի են ընկնում Աշ. Հովհաննիսյանի, Ռ. Գրեկովի, Մ. Հասրաթյանի, Գ. Գյուզալյանի եւ այլոց գրչին պատկանող ակնարկները, որոնցում նրանք մեկ անգամ եւս փորձ են անում վերլուծելու եւ գնահատելու Հ. Մանանդյանի մի շարք հիմնարար աշխատությունները, որոնք հայագիտության մնայուն արժեքներից են: Հուշագիրները հատկապես բարձր են գնահատում հայ պատմագրության երախտավորի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» բազմահատոր աշխատությունը, որն ընդգրկում է Հայաստանի Ք. ծ. ա. Զ - Ք. հ. ԺԵ դարերի ամբողջական պատմությունը, որը, ցավոք, մնացել է անավարտ: Նրանք միաժամանակ անդրադառնում են Հ. Մանանդյանի «Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական պատերազմների շրջանում» (1922 թ.), «Նյութեր Հին Հայաստանի տնտեսական պատմության» (երկու մասով, 1927-1928 թթ.), «Հունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները» (1928 թ.), «Հայաստանի առեւտրի ու քաղաքների մասին» (1930 թ.), «Կշիռները եւ չափերը հնագույն հայ աղբյուրներում» (1930 թ.), «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» (1934 թ.), Հին «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեւտինգերյան քարտեզի» (1936 թ.), «Տիգրան Ռ-ը եւ Հռոմը» (1940 թ.), «Հայաստանի քաղաքները X-XI դարերում» (1940 թ.), «Մեսրոպ Մաշտոցը եւ հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար» (1941 թ.), «Համառոտ տեսություն Հին Հայաստանի պատմության» (1943 թ.), «Գառնիի հունարեն արձանագրությունները եւ Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» (1946 թ.), «Հայ գրերի գյուտի տարեթվի հարցի շուրջը» (1952 թ.) մենագրություններին ու այլ մանր ու խոշոր աշխատություններին, որոնց ընդհանուր թիվն անցնում է 150-ից: Դրանց մի զգալի մասը ժամանակին տպագրվել են նաեւ ռուսերեն ու եւրոպական մի քանի լեզուներով: Հեղինակներն, անդրադառնալով այդ ամենին՝ ցույց են տալիս նաեւ հայ պատմագիտության զարգացման գործում դրանց խաղացած հսկայական դերը:

Գիրքն ունի նաեւ «Հավելվածներ» բաժին, ուր առաջինը զետեղված է «Հակոբ Մանանդյանն ինքն իր մասին» վերտառությամբ ելույթը, որը մեծանուն գիտնականի պատասխան խոսքն է՝ ասված իր ծննդյան 75 եւ գիտական գործունեության 50-ամյակներին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ, 1948 թ. դեկտեմբերի 2-ին:

Հոբելյարը, շնորհակալություն հայտնելով իրեն նվիրված հոբելյանական նիստ գումարելու եւ մեծարելու առթիվ, միաժամանակ համառոտ ներկայացնում է իր գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր պատկերը: Այդ պատասխան խոսքում նա անում է նաեւ մի շարք դիտողություններ ու առաջարկություններ՝ ուղղված երիտասարդ պատմաբաններին, Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմության չուսումնասիրված հիմնահարցերը վերհանելու եւ դրանք մեկնաբանելու համար: Ակադեմիկոս Հ. Մանանդյանի այդ դիտողությունները ուսանելի դասեր են եւ այսօր, ավելի քան վեց տասնամյակ անց, չեն կորցրել իրենց

գիտական արժեքն ու կարեւորությունը: Որպես ասվածի վկայություն, այդ խոսքից բերենք մի փոքրիկ հատված. «Մեր երիտասարդ գիտնականները պետք է նկատի ունենան,- ասում է նա,- որ հայ ժողովրդի պատմությունն անհրաժեշտ է ուսումնասիրել եւ շարադրել ոչ թե նախկինում եղած կարծիքները կուրորեն ներմուծելով եւ կուտակելով, այլ բուն սկզբնաղբյուրների հաղորդած նյութերի նորովի վերլուծությունների հիման վրա, որ հնարավորություն կտա նորապես լուծել հին խնդիրները եւ անաչառորեն լուսաբանել հայ ժողովրդի պատմության բազում դրվագներ» (էջ 170): Թվում է, ծերունազարդ պատմաբանի այս հորդորը վերաբերում ոչ միայն իր ժամանակի ու այսօրվա, այլեւ գալիք հետազոտողներին:

Հիշյալ բաժնի մյուս հրապարակումը ճանաչված պատմաբան Պետրոս Հովհաննիսյանի կազմած՝ Հ. Հ. Մանանդյանի կյանքի ու գործունեության եւ նրա հեղինակած աշխատությունների մասին մամուլում եւ այլուր տպագրված հոդվածների ու գրախոսությունների նոր, համալրված մատենագիտական ցանկն է: Չնայած Հ. Մանանդյանի եւ նրա երկասիրությունների ու դրանց արձագանքների մասին տպագրվել են մի շարք ցանկեր, ինչպիսիք են, օրինակ, Լ. Մելիքսեթ-Բեկի, Ե. Վլասյանի ու Ռ. Բաբաջանյանի, Լ. Բաբայանի եւ Վ. Հակոբյանի կազմածները, սակայն դրանց մեջ սույն ցանկը, որ այստեղ լույս է տեսնում երկրորդ անգամ[4], առավել ամբողջական եւ կարեւոր աղբյուր կարող է հանդիսանալ ականավոր պատմաբանի կյանքն ու գործը համակողմանիորեն ուսումնասիրելու համար:

Ժողովածուն եզրափակվում է «Հուշագրողների բառարան»-ով, ուր կենսագրական հակիրճ, բայց եւ անհրաժեշտ ու կարեւոր տեղեկություններ են բերված հուշերը գրող հեղինակների մասին՝ նշելով նրանց ծննդյան ու մահվան թվականները, ստացած կրթությունը, մասնագիտությունը, հաճախ՝ նաեւ զբաղեցրած պաշտոնները եւ այլն, մի բան, որ ավելի է բարձրացնում սույն գրքի գիտական արժեքը եւ հարստացնում է բովանդակությունը: Իսկ ծանոթագրություններում, որ դարձյալ պատկանում են կազմողի գրչին, ցույց են տրված հեղինակների կապն ու առնչությունները Հ. Մանանդյանի հետ, հուշերի գրության ժամանակը եւ առաջին անգամ դրանց տպագրվելու տեղը եւ այլն: Ծանոթագրություններում հաճախ ուղղված են հուշերում սպրդած սխալներն ու անճշտությունները: Կարեւոր են նաեւ հուշերում հիշատակված անձանց, դեպքերի ու իրադարձությունների, թվական տվյալների մասին տրված տեղեկություններն ու բացատրությունները, որոնք, կարծում ենք, մերօրյա ընթերցողների համար կարեւոր ուղեցույց կարող են լինել շուրջ մեկ դար առաջ տեղի ունեցած դեպքերի ու գործած դեմքերի մասին: Այս ամենը մենք նշում ենք ցույց տալու համար, թե կազմողը ինչպիսի ջանադիր ու դժվարին աշխատանք է կատարել սույն ժողովածուն գիտական պատշաճ մակարդակով ընթերցողներին ներկայացնելու գործում: Միայն ուզում ենք անել մի դիտողություն, որը վերաբերում է «Ծանոթագրություններ» եւ «Հուշագրողների բառարան» բաժինների տարանջատվածությանը: Մեզ թվում է կարելի էր այդ երկու բաժինները միավորել եւ ներկայացնել միասին, մի ընդհանուր վերտառությամբ, ուր սկզբից ներկայացվեին հուշագրողների մասին անհրաժեշտ տեղեկությունները, ապա դրանից հետո տրվեին ծանոթագրությունները: Գրքում տեղ են գտել նաեւ սխալներ ու վրիպումներ,

4 Առաջին անգամ տպագրվել է նույն հեղինակի կազմած «Հակոբ Մանանդյան. Կենսամատենագիտություն» (Եր., Երեւանի համալսարանի հրատ., 1981) գրքում.
տե՛ս էջ 56-73:

որոնք վերաբերում են Ղ. Մանանդյանի աշխատությունների վերնագրերին: Օրինակ՝ միևնույն վերնագիրը տարբեր տեղերում տարբեր ձևերով է ներկայացված, որոնք կարելի էր տողատակերում ուղղել: Կան նաև սրբագրական ակնհայտ վրիպումներ, օրինակ՝ գրքի 8-րդ էջում տպագրված մի վերնագրի մեջ Գառնիի հեթանոսական տաճարը դարձել է «հերոսական տաճար», որը հաճելի չէ:

Ինչևէ. ավարտելով նշենք, որ ընթերցող լայն հասարակության սեղանին է դրվել ականավոր պատմաբանին նվիրված հուշերի մի ժողովածու, որը ոչ միայն ամբողջացնում է մեծ գիտնականի կյանքի ու գործունեության նկարագիրը, այլև հարգանքի մի տուրք է, երախտիքի մի անթառամ պսակ նրա հիշատակին:

ՎԱՀԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու